Որպես թռչնորսություն, սիրում էին փասյանի, կաքավի և վայրի հավի որսորդությունը, իսկ որպես առևտրի միջոց՝ բազեարուծությունը։ Բազեի փոքր ձագերը պահում էին մեծ խնամքով, վարժեցնում որսի և վաճառում գնորդներին։

Պահում և որսի էին վարժեցնում նաև կաքավներին։ Կաքավների սպանությունը, բացի որսի պատճառած հաճույքից, համարվում էր որպես փոխ վրեժ։ Ավանդաբար պատմում էին, թե կաքավը ս. Թորոսին (Թեվադորոս) մատնել է կռապաշտ Սուրեն իշխանին[1], որը սպանել է նրան ս. Թորոսի վանքի ժայռերի ստորոտում և կաքավները իրենց կտուցները ու ոտքերը թաթախել են նահատակված սրբի արյան մեջ և կարմրացրել։

Կաքավների մի ուրիշ ցեղը, որ «չիլ» կամ «ճիռ» կաքավ էին կոչում, ենթակա չէր կրոնական նույն հալածանքին, որովհետև ըստ նույն ավանդության, ճիռերը դատապարտել են խասերի մատնության վատ արարքը և ոտքերն ու կտուցները չեն թաթախել սրբի արյան մեջ։ Ճիռերի կտուցները և ոտքերը մնացել են գորշ, իսկ կաքավներինը՝ կարմիր։

ՁԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ

Դերսիմի արագավազ ջրերում ամենատարածված ձուկը ալապալղն (իշխանաձուկ) էր, որն ուներ 15—20 սմ երկարություն, 200—400 գր քաշ։

Լեռնային բոլոր ջրերում առատ ալապալղ կար, բայց կազմակերպված ձկնորսություն գոյություն չուներ։ Քրդերը ալապալղը օգտագործում էին ճմլվածքներ դարմանելու, իսկ հայերը՝ խորովելու համար։

Ալապալղը որսալու համար բարդ սարքեր չկային, առավելապես որսում էին ձեռքերով և կամ գավազանի ծայրին կապված սակառներով։ Այդ ձուկը թաքնվում էր քարախորշերում, ծոցավոր ապառաժների արանքում և լողում ջրվեժից ջրվեժ։ Սև ու կարմիր բծերով (խալավոր) այս ձուկը ժողովրդական բժշկության մեջ մեծ դեր էր խաղում՝ կոտրված բայց սընըխչու կողմից սխալ տեղադրված ու ամրացած ոսկորը մեկը մյուսից անջատելու համար։ Նոր որսած ձուկը թարմ վիճակում լավ ծեծում և կապում էին կորթացած ոսկրին, օրը երկու անգամ, երեք օր շարունակ նույնը անելուց հետո, պնդացած ոսկրը անջատվում էր, անվնաս ուղղում և տեղադրում էին։ Նույն ձևով վարվում էին ճմլվածքների, ջղային հանգույցների (տամար-տամարի վրա ելած) դարմանումների ժամանակ։

Եփրատն ու Արածանին ձկնառատ գետեր էին, ամենափոքրերից մինչև 25 կգ քաշ ունեցող տեսակներ շատ կային, բայց ոչ ոք չգիտեր դրանց բոլորի անունները։ Տեղի բնակիչներին ծանոթ էին ձկների հետևյալ տեսակները՝ ալապալղ (արքայաձուկ, որի մասին խոսվեց վերը), լուսնթագ, կողակ, խատուտիկ, սանտերք, թոս-թոս (կամ ֆրս-ֆրս), գըող (որ նշանակում է մեծ, գեր), կուզիկ, գիրուկ, լեզկի, մող, շրպութ (թռչող ձուկ), օձաձուկ, շնաձուկ (կամ ջրշուն), որոնցից ամենահարգիներն էին՝ առաջին տեղը գրավող ալապալղը, ապա փշագուրկ, յուղալի և համեղ թոսթոս (կամ ֆըս-ֆրս) ձուկը, որը բարեձև մարմին ուներ, կռնակը սև, փորը մոխրագույն, կշիռը մինչև 1,5 կգ, սա սիրում էր բույն դնել հողաշերտերում և հեռու էր մնում տարբեր ձկների վտառներից, մենակյաց էր, ուներ թրանման թևեր, որոնցով կարող էր վնասել մարդոց, երբ ձեռքով բռնեին, տարօրինակ ձայն էր հանում, որից և ստացել էր իր անվանումը։ Թոս-թոսը որսում էին առավելապես գարնան ամիսներին, երբ գետերը հորդում և իրենց հունից դուրս էին գալիս։ Սա մտնում էր ջրից բացված հողաշերտերը, ուր ձկնորսները գտնում և բռնում որսում էին ձեռքերով։

Մյուսը մողն էր, որը հաստագլուխ, հաստաշրթունք, նվազ փշոտ և համեղ միս ունեցող ձուկ էր, մարմինը սլացիկ, արագաշարժ, տեղ-տեղ քաշը հասնում էր մինչև 25 կգ, այդ քաշն ունեցող մողը կոչվում էր բռատամ: Զանազան մեծություն և կշիռ ունեցող մողեր կային, որոնց միջին քաշը մի կգ-ից տասի միջև տատանվում էր։ Բացի բռատամության հասնող մողից մնացյալները առավելապես որսացվում էին գետերին խառնվող ջրերի գետաբերաններում և ակերում, որովհետև մողը սիրում էր ձու դնել անուշ և զուլալ ջրերի մեջ։ Երբ գետերի ջրերը հորդում ու պղտորվում էին, և մողերը վտառներով լողում էին դեպի զուլալ ջրերը, ձկնորսը հետևում էր նրանց շարժումներին և պատնեշներ կանգնեցնելով գետակը գետին խառնվելու տեղից քիչ վեր, փոխում էր հոսող ջրի ընթացքը։ Ջրի նվազումից սարսափահար ձկները փախուստի էին մատնվում դեպի գետը և դեմ տոնում պատնեշին, ուր և կուտակվում էին մեծով ու

[1] Կռապաշտ Սուրեն իշխանը, որ բնակվելիս է եղել Սուրենավանում (ներկայիս Զուրեն քրդաբնակ գյուղը), սպանել է սուրբ Թեադորոսին։ Այս ավանդությունը պատմում էին Դերջանում, Դերսիմում և Պալապանի բոլոր գյուղերում, ուր գտնվում է հիշյալ վանքը՝ Երզնկայի և Դերջանի միջև Մըրջերդի (Մըլրերդ) ստորոտում։

փորրով, որոնք էլ առատությամբ որսվում էին։

Մինչև 20 կգ առավելագույն ծանրություն ունեցող գրող ձուկը առատորեն լինում էր Եփրատի և Արածանիի ջրերում, սպիտակամարմին փայլուն թևփուկներով, սապատավոր այս ձուկը գաստագաշարժ էր, միջոր համեղ, որսը հեշտ և ավելի առատ։ Դրոդն ուներ բութ սապատ, որը գլխից վար աստիճանաբար վեր բարձրանալով, կորաձև թևվում էր դեպի պոչը։ Համեմատած ուրիշ ձկների հետ, ավելի յուղոտ և գեր էր, որոնում էին ուռկաններով։ Դրոդի միջակը կուդիկն էր, որի սապատը ավելի ցցուն էր, երկուսն էլ պատկանում էին նույն բնատեսակին, միջին բաշը հասնում է 10 կգ։

Քաշող ձուկ կամ շրպուի անունն էին տալիս բարձձև, համաչափ և պայծառ մարմնով ձկանը, որը ուռկան կարող, ուռկանից, նույնիսկ որսացվելուց հետո դեռատիպ փորը տարածությունից արագ ցատկումներով իրեն դեռ էր նետում։ Շրպուին էլ մոտավորապես դրոդի դույնն ուներ, սպիտակամարմին և գլխից մինչև պոչը շատ բիչ տարբերություններ համալափ էր, բայց դրոդի նման գանգրաշարժ և սապատավոր չէր, ընդհակառակը, խիստ, շարժուն, նետվող, համարձակ մի ձուկ էր, միջոր համեղ և գյուրամարս։ Միջին բաշը մինչև կգ էր, փորերը կշռում էին 1—2,5 կգ։

Ամենատարածված ձուկը խատուտիկն էր, որի մարմինը ծածկված էր դույնզգույն փորը բծերով։ Սա լցվում էր վտառներով, միջոր թեև համեղ էր, բայց փշոտ, շատ չէր մեծանում, միջին բաշը հասնում էր մինչև 600 գրամի, որսալը հեշտ էր։

Եփրատ և Արածանի գետերի, մանավանդ Եփրատի դարձան վարարումը, որն ամեն տարի ապրիլի 7-ին էր տեղի ունենում և որին լեզվի էին ասում, տևում էր մի շաբաթ՝ ապրիլի 7—15-ը, որից հետո աստիճանաբար նվազում էր։ Գետերը դուրս գալով հուներից, տարածվում էին դաշտերի ու մարգագետինների ուղղությամբ, ափելով ձկների վտառները, որը և հավաքում էին մերձակայքի բնակիչները։

Որսը կատարվում էր թոռների, շերեփների, բիսոնների, ջրարդելակման միջոցներով և ապտանների (կամ գենաների) օգնությամբ։ Ձկնորսության շրջանը սեպտեմբերից մինչև մայիսի վերջն էր, ամեն մի եղանակ, բացի ամռանից, ուներ առանձնահատուկ որսելաձև։ Եթե դարձանն օգտվում էին ջրերի վարարումի բնական հնարավորություններից, այնպես՝ անձրևների առատությունից, ապա ձմեռն էլ ուներ սառցահատմամբ որսալու տարբեր միջոցներ։

Կարթով ձկնորսություն բնդհանրացված չէր, այն նկատում էին ժամավաճառություն, թեև սկսնակներից ոմանք փորձում էին այդ միջոցը ժամանցի կամ առարյա զբաղմունքի համար։ Ձկան փոքրաթանակ որոր կատարում էին շերեփներով։ Շերեփը փոքր ուռկան էր, հյուսված ավելի նեղ ծակերով, շերեփաձև, բայց բավական մեծ ու խոր, որի բերանի կողմը ամրացնում էին կլոր փայտի վրա, որը մնում էր միշտ բաց, իսկ տակի մասին կտրում էին կապարի կտորներ ջրի մեջ սուզելու համար։ Ուռկան-շերեփը ամրացված էր լինում երկարակոթ մի փայտի վրա, ձկնորսը կանգնած գետափին, շերեփը մերում էր ջրի մեջ ու հանում, մինչև որ նույն օրը օգտագործելու չափ ձուկ որսար։ Շերեփով որսած ձկները փոքր էին լինում, 200—400 գր, կային և ավելի փոքրեր։ Դա ձուկ որսալու ամենապարզ ձևն էր։

Թոռով ձուկ որսալու համար օգտագործում էին տկայաստ, որը նավակից ավելի գործնական և ապահով էր։ Լաստի միջոցով կատարված ձկնորսություններ հատուկ էր դաշտային շրջաններին, ուր ջուրը արագահոս չէր և գետերում խորություններ կային։ Տկայաստով որսի գնալիս օգտագործում էին տարբեր ձևի ուռկան, որի հատակը բոլորակ էր և դույզ թելերով հյուսված, երկար ու խորը խարարի ձև ուներ, բերանը ավելի լայն էր, կեսը խիտ կապած կաղարի կտորներով, իսկ վերը բոլորակի ծակոտիների միջից անցկացրած էր երկար հաստ պարանը և բերնակապի լարը։ Պարանն անցրնում էին միայն բերնի կես բացվածքի միջով, իսկ լարը՝ բերնի եղերքով, որի երկու ծայրերից բռնում էին երկու ձկնորս, իսկ լաստավարը լաստին ուղղություն էր տալիս։ Երբ հասնում էին խորությունների, ուռկանի պարանը բռնող ձկնորսները ուռկանը ջուրն էին նետում և պարանները թողնում այնքան, որ ուռկանի վարի մասին կապված կաղարների ծանրությունը հասներ դեռնին, պարանի վրա ամրացված վերի մասը մնում էր ավելի բարձր և հնարավորություն տալիս ձկներին առանց կասկածելու խուժել լայն բացված բերանից ներս, ու երբ զգում էին ուռկանի ձգումը, բռնում էին ուռկանի բերնակապը, որը ամրացված էր ուռկանի ծակերից, և որոնց ծայրերը գտնվում էին պարան բռնողների մոտ։ Բերնակապը փակում էր ուռկանի բերանը, իսկ պարաններով դուրս էին բաշում այն լաստի վրա։

Երբեմն նույն ձևով ձկնորսություն էին կատարում դույզ տկայաստով, նույնաձև, բայց ավելի մեծ ուռկաններով։ Տկայաստերից մեկի վրա կեցող երկու ձկնորսը և լաստավարը մնում էին աջ,

մյուսները՝ ձախ ափում և բռնում գետի ամբողջ լայնքը. նման պարագաներում լաստերը կապում էին երկու ափերում զարնված ցցերին, որ հոսանքը չքշեր։

Կային փոխագրական կամ ձկնորսական լաստեր, որոնք կազմվում էին 12, 16 կամ 24 տկերից։ Տիկը լավ մշակված այծի փոստից (մորթի) էին պատրաստում, նայած փոխագրվելիք ապրանքի կամ կատարվելիք աշխատանքի համեմատական չափին, ըստ այնմ օգտագործում էին մեկ կամ մյուս ձևի լաստը։ Լաստը գետափնյա ցցերին ամրացնելուց և պարաններով կապելուց հետո լաստավարը օգնում էր ձկնորսներին ուռկան խարարը գետը նետելու, այսպիսով, երկու լաստերի վրա գտնվող վեց կամ յոթ հոգանոց ձկնորսների խմբակը անցնում էր գործի։ Որսալու այդ գործողությանը հայերը սանտերք, թուրքերը՝ թարամք էին ասում։

Եթե պատահեր, որ ուռկանը նետած տեղը ձկներ չգտնվեին, ուռկանը առանց ջրից դուրս հանելու լաստերը վարում էին ջրի հոսանքն ի վեր, կրկին ամրացնում գետափնյա ցցերին։

Ձկնորսները երբ նկատում էին ուռկանի ձգումը, պարանների պրկումը, տնմիջապես բաշում էին բերնկապի լարը և ձախափնյա լաստավարը լաստը ուղղում էր դեպի աջափնյա լաստը և երկու լաստերի միացումից հետո ջրից դուրս էին բաշում և դատարկում ուռկանում բռնված ձկները։

Ձուկը որսում էին առհասարակ դիշերը. ձուկը շատ զգույշ է, խուսափում է աղմուկից, բայց սիրահար է դիշերային լուսնի լույսին և աստղերի փայլին։ Ամպամած եղանակներին օգտագործում էին պյուրավառ փայտե խրձիկներ, որոնք մեղմ կերպով լուսավորում էին շրջապատը։

Կար և որսի մի ուրիշ ձև, որը կատարում էին առանց թոռի կամ ուռկանի, այդ ձևի ձկնորսությունը պահանջում էր փորձառություն և արագաշարժություն։ Վեցից-ութ հոգուց բաղկացած ձկնորսական խմբակն իր հետ վերցրած պյուրավառ ցախերի, մարիի երկար շերտերից արված փոքր խրձիկներ, որոնք կապված էին լինում երկար ձողերի ծայրին, և պինված սրածայր եռաժանիներով (իրեր-մատնի), գնում էին որսի։

Ձահերից ջրի մակերևույթ պսպղում և ձկները ջրի խորությունից դեպի լույսն էին ձգտում։ Ընդհանուր լռության մեջ, նույնիսկ առանց շարժվելու, դիրքավորված ձկնորսները անհամբեր սպասում էին մեծ ձկների հայտնվելուն, որոնք դալիս էին փորերից հետո և մի պահ անշարժանում լույսի ազդեցությունից։ Այդ անշարժության միջոցին էր, որ արագորեն գործում էին իրեր-մատնիները, որոնք խրում էին ձկների կողերը և շպրտում ցամաք. որսը շարունակվում էր նույն ձևով գետի տարբեր վայրերում, մինչև լուսաբաց։ Այս ձևի որսորդության ժամանակ առավելապես որսում էին երեքից-հինգ կգ կշիռ ունեցող ձկներ։ Ձկնորսության այս ձևը կիրառվում էր աշնան մութ գիշերներին, որը բավարար և առատ որս էր տալիս։

Ջմռանը Եփրատի և Արածանիի մեղմ սահանք ունեցող վայրերի ջրի մակերևույթ սառչում էր, տեղ-տեղ այնքան հաստ շերտով, որ մարդիկ և անասունները հեշտությամբ երթևեկում էին մի ափից մյուսը։ Նման պարագաներում ձկնորսները դիմում էին տարբեր միջոցների՝ կացիններով ջարդում էին սառույցը և բթոցներ կախում ջրի մեջ։ Բթոցները լայնաբերան և խորն էին լինում։ Բերանի մի մասում կապում էին ծանրություն, որպեսզի բթոցը ջրի մեջ մնար թեք վիճակում, իսկ վերի մասում ամրացված պարանները բռնում էին երկու հոգով։

Բթոցների մեջ կապում էին դարու կարված հատիկներ, հավի ազիրների կտորներ, նույնիսկ նախապես որսած մանր ձկներ, որոնք որդեր խայծ էին ծառայում ավելի մեծ ձկներին։

Մեծ բանակությամբ ձուկ որսալու համար կիրառում էին տարբեր միջոցներ։ Եփրատի և Արածանիի, նույնիսկ Ֆեմի, Բզիի, Բերիի ջրերի դաշտային շրջաններում, գետերից անջատված և դարձյալ գետը թափվող ջրանցքներ, ղելտաներ, լեղուներ շատ կային, որոնք անջատվում էին մայր ջրի կենարոնական հոսանքից և սառչում։ Նման պարագաներում ձկները ավելի տար ջրեր և խաղաղ անկյուններ էին փնտրում։ Ձկնորսների մի խումբ կոտրելով գետից պատված ու կարճ ճանապարհ կտրելուց հետո կրկին դետին միացած գետաբերանի սառույցները, ջրի խորությանն ու լայնքին համեմատ աղտաներ էին ամրացնում, ցցեր հաստատում, աղա ուռկանները դցում, որոնց պարանների ծայրերը կապված էին լինում ջրափնյա ցցերին։ Ձկնորսների մի ուրիշ խումբ դետից անջատված ջրի հոսանք փակում և ջուրը ցամաքեցնում էր, այդտեղից սկսած սառույցը կոտրում և ջրի հոսանքն ի վար էին ընթանում, մինչև որ հոսանքի երկայնքով ջուրը ցամաքում և ձկները մնում էին առանց ջրի, որոնց մի մասը հոսանքն ի վար դեպի դետը դնալու ժամանակ ընկնում էր մի բանի շարք իրարից հեռու շարված ուռկան-ծուղակները, իսկ մնացյալ մասը դեմ էր

տանում ագարակից ամբարված պեճերին ու թոնրատում.

Ամեն գյուղ կամ շրջան, նայած տեղի բնական պայմաններին, ջրի հոսանքի ազդեցությանը կամ ստեղծած հարմարություններին, իր միջավայրին համապատասխան ձևեր և միջոցներ էր ստեղծել, այնպես որ մի տեղ օգտագործված ձկնորսության միջոցները մի ուրիշ տեղի համար անպետք էին համարվում։

Ձկնորսությունը կատարվում էր համագործակցության ձևով և որսը բաժանվում մասնակիցների միջև հավասար կերպով.

ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՀԵՍՏՆԵՐ

Ելնելով տեղի յուրահատկություններից, ներկայացվող զբաղմունքները կարելի է բաժանել երեք կարգի՝ վարչական կենտրոնների (շրջկենտրոնների) զբաղմունքներ, հումք ունեցող շրջանների զբաղմունքներ, պահանջի համաձայն շրջուն տնայնագործներ կամ արհեստավորներ։

Շրջկենտրոններից ամեն մեկը թեև ուներ վարը արձանագրվելիք արհեստների գրեթե բոլոր տեսակները, բայց որոշ վայրերում կային առանձնահատկություններ այսինչ կամ այնինչ տնայնագործական զբաղմունքի կամ արհեստի բնագավառում։ Այսպես, Բալուի շրջանի գյուղատնտեսությունը իր շրջկենտրոն Բալու գյուղաքաղաքով, ավելի ճիշտ՝ Բալահովտի բնակչության որոշ տոկոսը հայտնի շինարարներ և վարպետներ (ղալֆա) էին։ Բալուցի ղալֆաների անունը և համբավը տարածված էր իր սահմաններից դուրս. Պոլսո, Իզմիրի կամ Ռուսիայի գլխավոր այլ քաղաքների պալատների, մզկիթների, եկեղեցիների, բաղնիքների և կամուրջների կառուցողները մեծ մասամբ բալուցիներ էին։ Բալուցի շինարարների արհեստը ժառանգական էր, կարելի է ասել, թե առանց որևէ հիմնական կրթության և առանց ճարտարապետական վարժարանների օգնության բալուցի ստեղծագործողը ի ծնե ճարտարապետ էր։

Ամեն շրջան, առավել կամ նվազ, զբաղված էր կավե ամաններ պատրաստելու տնայնագործությամբ, բայց այս բոլորի մեջ Չարսանջակը իր կենտրոնական գյուղաքաղաք Պերիով առանձնահատուկ տեղ էր գրավում։ Պերիի կավե ամաններն իրենց գեղեցկությամբ, տոկունությամբ, որակով, նրբությամբ և բանակով գերազանցում էին շրջանի բոլոր արտադրությունները։ Այս գործն այստեղ անցնելով տնայնագործության սահմաններից, դարձել էր արհեստ բրուտություն և ապրելու միջոց։ Չարսանջակի ջրի կժերը, փարչերը և գինու կարասները այնպիսի հատկություն ունեին, որ ջերմությունը վանում և իրենց մեջ լցված ջուրը կամ գինին ամենաշոգ ժամանակներն անգամ սառնորակ էին պահում, դրանք հախճապակե ամանների նման զրնգուն ձայն էին հանում։

Բոլոմորիի և Ղզլքիլիսեի շրջանները հանրածանոթ էին փայտամշակության ասպարեզում։ Այստեղ պատրաստված տեփուրները, գուչերը, տաշտերը, ջրաղացի ջրի խողովակները և զանազան տնային կամ երկրագործական գործիքներ գերազանցում էին մնացյալ շրջանների նույն տիպի արտադրությունները և մրցում բոլորի հետ։

Մասնակի այս մեջբերումներն արվեցին այն պարզ պատճառով, որ կանգ չառնվի ամեն մի շրջկենտրոնի կամ գյուղի վրա առանձին, մյուս կողմից ասելու համար, թե բնականորեն որևէ շրջանի արտադրական հումքի գոյության փաստը առիթ և ազդակ էր ավել համապատասխան տնայնագործական ճյուղի զարգացմանը։ Այսպես, Բալուի ընտիր քարհանքերը հրապուրել էին բալուցի կառուցողներին դառնալու քարտաշներ, պատ շարողներ և ղալֆաներ։ Չարսանջակի ընտիր և որակյալ կավի առատ հումքը առիթ էր ավել տնային կավամաններ պատրաստող տնայնագործին ավելի սերտորեն կապվելու կավին և նրա միջոցով նվաճելու բրուտության արհեստը։ Ղզլքիլիսեի և Բոլոմորիի կույս անտառների բազմատեսակ ծառերը ներշնչել և հրապուրել էին այդ շրջանների սահմանափակ տնայնագործությունը վերածել փայտամշակման արհեստի։

Դերսիմի բարձրավանդակի գյուղերում տնայնագործներ կային, բայց բառի լայն իմաստով արհեստավորներ, շատ տեղերում նույնիսկ դարբին կամ պայտար չկար։ Արհեստավորները կենտրոնացած էին առավելապես վարչական կենտրոններում, որոնք գրեթե չէին տարբերվում մեկը մյուսից։

Վարչական կենտրոններում գոյություն ունեցող արհեստներն էին՝ պղնձագործություն, դարբնություն (երկաթագործություն), դերձակություն, պայտարություն, զինագործություն (զենքեր նորոգողներ, սուր, թուր և դանակներ շինողներ), կլայեկագործություն (ղալեյճի), կոշկակարություն (եմենիճի, հնակարկատ, փինաճի), թաղիքագործություն, համետագործություն (սեմերճիներ և փալանճիներ), ատաղձագործություն, թիթեղագործություն, կաշեգործություն (կյոնճիներ, դաբախներ), փայտամշակություն, կավագործու-